ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

PKF

ԷԿԼՕՖ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 9/5, գրասենյակ 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ-կայք՝ www.pkfarmenia.com

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԷԿԼՕՖ ՈՒՆիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ի մասնակիցներին

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է **ԷԿԼՕՖ ՈՒՆիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ի** (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել

ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն , որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝դրնաց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք պմասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսցող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 06.03.2023թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Գլխավոր Տնօրեն Գոռ Դավթյան

Որակավորված աուդիտոր Գայանե Թովմասյան

«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» "PKF AUDIT SERVICE" 00419022

ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 9/5, գրասենյակ 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ-կայք՝ www.pkfarmenia.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ 2

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ 3

3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 4

4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ԱՍԻՆ 5

5. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբերի 2022թ.

(Հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2022թ.	2021թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		338,322	328,774
Տոկոսային և նմանատիպ ծախսեր		(58,502)	(67,490)
ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ	4	**279,820**	**261,284**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		77,084	53,941
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(290)	(581)
Ստացված զուտ կոմիսիոն վճարներ	5	**76,794**	**53,360**
Արտարժութային գործարքներից ստացված զուտ օգուտ/(վնաս)		(1,323)	(543)
Այլ գործառնական եկամուտ	6	45,626	40,582
Արժեզրկման գծով (ծախս)/հակադարձում	7	43,134	96,174
Անձնակազմի գծով ծախսեր	8	(121,170)	(121,435)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	9	(70,521)	(72,278)
Այլ ծախսեր	10	(16,385)	(15,045)
ՇԱՀՈՒՅԹ ՄԻՆՉԵՎ ՀԱՐԿՈՒՄԸ		**235,975**	**242,099**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	5,524	**(64,663)**
ՇԱՀՈՒՅԹ ՀԱՐԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ		**241,499**	**177,436**
Այլ համապարփակ եկամուտ		-	-
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ		**241,499**	**177,436**

Սույն ֆինանսական հաշվետվությունները ընդունվել և հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 06.03.2023թ.

ԷԿԼՕՖ ՈՒՎԿ ՍՊԸ
Գործադիր տնօրեն՝ Ստեփան Թորոսյան

Փորձագետ հաշվապահ՝ Կարինե Պապուջյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբերի 2022թ.

(Հազար ՀՀ դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծան.	2022թ.	2021թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	12	3,498	3,122
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	13	209,401	200,522
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխատվություններ	14	1,775,048	1,667,412
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	15	96,612	25,661
Հետաձգված հարկային ակտիվ	11	-	-
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	16	13,336	25,544
Այլ ակտիվներ	17	6,566	4,790
Ընդամենը՝ ԱԿՏԻՎՆԵՐ		**2,104,461**	**1,927,051**
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	18	-	11,022
Ներգրավված փոխառություններ	19	704,885	762,985
Հետաձգված հարկային պարտավորություն	11	74,475	91,449
Այլ պարտավորություններ	20	60,492	38,485
Ընդամենը՝ պարտավորություններ		**839,852**	**903,941**
Սեփական Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	21	701,221	701,221
Կուտակված շահույթ (վնաս)		563,388	321,889
Ընդամենը՝ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**1,264,609**	**1,023,110**
Ընդամենը՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**2,104,461**	**1,927,051**

ԷԿԼՕՖ ՈՒՎԿ ՍՊԸ
Գործադիր տնօրեն՝ Ստեփան Թորոսյան

Փորձագետ հաշվապահ՝ Կարինե Պապուջյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբերի 2022թ.

(Հազար ՀՀ դրամ)	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ/ վնաս	Ընդամենը
Մնացորդն առ 01 հունվարի 2021թ.	701,221	143,491	844,712
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	177,436	177,436
Նախորդ տարվա ֆինանսական արդյունքի ճշգրտում		962	962
Շահութաբաժիններ	-	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.	701,221	321,889	1,023,110
Մնացորդն առ 01 հունվարի 2022թ.	701,221	321,889	1,023,110
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	241,499	241,499
Շահութաբաժիններ	-	-	-
Նախորդ տարվա ֆինանսական արդյունքի ճշգրտում			
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	701,221	563,388	1,264,609

ԷԿԼՕՖ ՈՒՎԿ ՍՊԸ
Գործադիր տնօրեն՝ Ստեփան Թորոսյան

Փորձագետ հաշվապահ՝ Կարինե Պապուջյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբերի 2022թ.

(Հազար ՀՀ դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2022 թ.	2021 թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	318,049	298,778
Վճարված տոկոսներ	(55,622)	(64,422)
Կորուստների վերականգնում	301,884	272,686
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ	36,724	45,132
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(87,777)	(91,876)
Վճարված հարկեր	(35,794)	(42,495)
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	**477,464**	**417,803**
Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)		
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ		
Ներգրավված միջոցների ավելացում(նվազում)	(78,229)	31,897
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(268,059)	(271,699)
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	**131,176**	**178,001**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(63,347)	(4,907)
Հիմնական միջոցների օտարում		
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	**(63,347)**	**(4,907)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Կանոնադրական կապիտալի համալրում		
Վճարված շահաբաժիններ	-	-
Բանկերից ստացված վարկերի ավելացում/նվազում	(10,942)	(35,546)
Ստացված փոխառությունների ավելացում/նվազում	(55,186)	(134,039)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից	**(66,128)**	**(169,585)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**1,701**	**3,509**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,320)	(1,000)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	**3,153**	**644**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**3,534**	**3,153**

ԷԿԼՕՖ ՈՒՎԿ ՍՊԸ
Գործադիր տնօրեն՝ Ստեփան Թորոսյան

Փորձագետ հաշվապահ՝ Կարինե Պապոյան

ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ԷԿԼՕՖ ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է ԷԿԼՕՖ Հիմնադրամի կողմից, որը հանդիսանում է ECLOF International Global Family-ի (կենտրոնը՝ Ժնև, Շվեյցարիա), ինչպես նաև MFC՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Նորանկախ Պետությունների միկրոֆինանսական կենտրոնի անդամ:

ԷԿԼՕՖ ՈՒՎԿ ՍՊԸ-ն գրանցվել և լիցենզավորվել է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից՝ 17 հոկտեմբերի 2006թ.-ին: Լիցենզիա թիվ 17:

ԷԿԼՕՖ ՈՒՎԿ ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է վարկային ծրագրեր:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, ք. Էջմիածին, Բաղրամյան 2/1:

Համաձայն կանոնադրության Ընկերության գործունեության նպատակներն են.

- փոխառություններ և վարկեր տրամադրել ֆիզիկական և իրավաբանական անձանց, որը հնարավորություն կտա վերջիններիս բավարարելու իրենց սոցիալ-տնտեսական պայմանները և ամրապնդելու իրենց ինքնուրույնությունը, ապահովելու այն գործունեությամբ, որի համար ստանում են փոխառություններ և վարկեր, որով կստեղծեն որոշակի եկամուտներ, ինչպես փոխառությունները և վարկերը ետ վերադարձնելու, այնպես էլ եկամուտներ ունենալու համար.

- փոխառություններ կամ վարկեր տրամադրել այն անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց, որոնք նպաստում են փոքր և միջին բիզնեսի կայացմանը և զարգացմանը, ինչպես նաև աշխատատեղերի ստեղծմանը և պահպանմանը.

- փոխառություններ կամ վարկեր տրամադրել եկեղեցիներին, եկեղեցահար հաստատություններին, քրիստոնեական կազմակերպություններին, ոչ առևտրային կազմակերպություններին և ՀՀ համայնքներին, որոնք ուղղված են սոցիալական, կրթական, առողջապահական և այլ ծրագրերի կատարմանը:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տվյալներով կազմել է 35 աշխատակից (2021թ.՝ 37):

2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

2.1 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից մշակված և հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Ներկայացման Միջազգային Ստանդարտների (ՖՀՆՄՍ) և Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի (ՖՀՄՄԿ) կողմից թողարկված Մեկնաբանությունների համաձայն: Համեմատական տեղեկատվությունը և ֆինանսական հաշվետվությունները ներառում են Ընկերության ֆինանսական գործունեության արդյունքները և դրամական հոսքերը 31.12.2022թ. ավարտված տարվա համար:

2.2 ՉԱՓՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.3 ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ և ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԺՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է, որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ընկերության ֆունկցիոնալ արժույթ է հանդիսանում ՀՀ դրամը, քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

2.4 ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած դատողությունների, գնահատումների և ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է ստորև՝

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Այն բիզնես մոդելի գնահատումն է, որի շրջանակներում պահվում են ակտիվները և պայմանագրային դրույթների գնահատումը, որոշելու համար, թե արդյոք որոշակի ամսաթվերին առաջացող դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 3:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Գնահատում, թե արդյո՞ք ֆինանսական ակտիվի պարտաքային ռիսկն էականորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, միևնույն պարտքային ռիսկի բնութագիր ունեցող ակտիվների խմբավորումը, սպասվելիք պարտքային վնասի գնահատումը՝ այդ թվում ապագայի կանխատեսմանը վերաբերող տեղեկատվության օգտագործմամբ:

Վարձակալություն

Վարձակալության պայմանագրով (որի շրջանակներում Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ) վարձակալության ժամկետի սահմանում, ներառյալ այն, թե արդյոք Ընկերությունը ողջամտորեն մտադիր է կիրառել վարձակալի ընտրելու հնարավորությունը, և վարձակալության գծով պարտավորությունները չափելու համար օգտագործվող լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի որոշում:

Անընդհատության սկզբունք

Ղեկավարությունը պատրաստել է այս ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա: Այս դատողությունն անելիս ղեկավարությունը հաշվի է առել Ընկերության ֆինանսական վիճակը, ընթացիկ մտադրությունները, գործառնությունների եկամտաբերությունը և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը:

Ընկերությունը կայուն հասույթ է ստանում իր բիզնես գործունեությունից: Ղեկավարությունը չի ակնկալում, որ իրավիճակը կարող է առաջացնել իր գործունեության անընդհատության անհամապատասխանություն՝ հաշվի առնելով դրական գործառնական դրամական հոսքերի շարունակականության ակնկալիքը:

Գնահատումներ կատարելուց հետո Ընկերության ղեկավարությունը ողջամիտ ակնկալիք ունի, որ Ընկերությունը տեսանելի ապագայում կարող է ապահովել իր գործունեության անընդհատությունը: Հետևաբար իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը շարունակում է հիմնվել անընդհատության սկզբունքի վրա, այդ իսկ պատճառով սույն ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում որևէ ճշգրտումներ, որոնց անհրաժեշտությունն ի հայտ կգար այն դեպքում, եթե Ընկերությունը ի վիճակի չլիներ ապահովել իր գործունեության շարունակականությունը:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտարկելի («իրական արժեքի հիերարխիա»):

2.5 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ընկերությունը կիրառել է հետևյալ վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք ուժի մեջ են մտել 2022 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը չի կիրառել որևէ ստանդարտ կամ փոփոխություն, որը նախկինում ընդունվել է, բայց ներկայումս դեռ գործող չէ:
Փոփոխությունների էությունը և ազդեցությունները նկարագրված են ստորև.

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2022թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2022թ, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անվանումը
ՖՀՄՍ 3	Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)
ՀՀՄՍ 16	Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)
ՀՀՄՍ 37	Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37

	փոփոխություններ)
ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16	2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ընթացիկ տարում չկիրառված նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները չեն բացահայտվել, քանի որ չի ակնկալվում, որ դրանք էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անվանումը	Ուժի մեջ է
ՖՀՄՍ 17	Փոփոխություններ ՖՀՄՍ 17 Ապահովագրական պայմանագրերում, ներառյալ IRFS 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (Փոփոխություններ ՖՀՄՍ 4-ում)	*1 հունվարի 2023թ*
ՖՀՄՍ 12	Մեկ գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկ (Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում)	*1 հունվարի 2023թ*
ՖՀՄՍ 17	ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (Փոփոխություն ՖՀՄՍ 17-ում)	*1 հունվարի 2023թ*
ՀՀՄՍ 8	Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում)	*1 հունվարի 2023թ*
ՀՀՄՍ 1	Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և պրակտիկայի հաշվետվություն 2)	*1 հունվարի 2023թ*
ՀՀՄՍ 1	Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում)	*1 հունվարի 2024թ*
ՀՀՄՍ 16	Վարձակալության պարտավորություն վաճառքի և վարձակալության ժամանակ (Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում)	*1 հունվարի 2024թ*
ՀՀՄՍ 1	Դաշնագրերով ոչ ընթացիկ պարտավորություններ (Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում)	*1 հունվարի 2024թ*

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Տոկոսային ծախսեր և եկամուտներ

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես « տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս » օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ընկերության կողմից ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Ընկերությունը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով յուրաքանչյուր օր, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից: Հաշվեգրվող գումարների չափի հաշվարկման հիմք են հանդիսանում համապատասխան պայմանագրերը:

Չաշխատող վարկերի և այլ ակտիվների գծով, երբ դրանց մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում, տոկոսային եկամուտը չի ճանաչվում: Նման տոկոսային եկամուտները ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում են

դրամարկղային մեթոդի համաձայն:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներն ու ծախսերը, մասնավորապես՝ առդիտորական,գովազդային, շենքի պահպանման, տեխնիկական սպասարկման պարտավորությունները, ինչպես նաև փոխադրամիջոցների օգտագործած վառելիքի ծախսային պարտավորությունները, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են հաշվեգրման սկզբունքով՝ ծառայությունների մատուցման ընթացքում կամ հիմք ընդունելով համապատասխան պայմանագրային պայմանները:

Շահաբաժինները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են հաշվեգրման սկզբունքի համաձայն՝ դրանց հայտարարման պահին:

Եթե ֆինանսական ակտիվները կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Միջնորդավճարներից և այլ նմանատիպ վճարներից եկամուտներ ու ծախսեր

Միջնորդավճարները, վարձավճարները և այլ եկամտային ու ծախսային հոդվածները հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, ծառայությունների մատուցման ընթացքում:

Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախս» հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերագնահատվում են յուրաքանչյուր օր գործառնական արժույթով՝ կիրառելով տվյալ ամսաթվի ՀՀ ֆինանսական շուկայում ձևավորված և Կենտրոնական Բանկի կողմից հայտարարված հաշվարկային փոխարժեքը:

Ստորև ներկայացվում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Ընկերության կողմից օգտագործված տարեվերջյան փոխարժեքները.

Արտարժույթի տեսակ	ՀՀ ԿԲ-ի հաշվարկային փոխարժեքը	ՀՀ ԿԲ-ի հաշվարկային փոխարժեքը
	31.12.2022թ-ի դրությամբ	31.12.2021թ-ի դրությամբ
1 ԱՄՆ դոլար	393.57 ՀՀ դրամ	480.14 ՀՀ դրամ

Հարկում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով ՀՀ Հարկային օրենսգրքի «Շահութահարկ» գլխի համաձայն եկամուտներից չնվազեցվող ծախսերը:

Հետաձգված հարկերը, եթե առկա են այդպիսիք, առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ակտիվի կամ պարտավորության հարկային բազան դա գումար է, որը հարկային նպատակներով վերագրվում է այդ ակտիվին կամ պարտավորությանը: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը:
Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և հարկային պարտավորությունները հաշվանցվում են, երբ Ընկերությունն ունի ճանաչված ընթացիկ հարկային ակտիվների և պարտավորությունների գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք:

ՀՀ-ում գործում են նաև բազմաթիվ այլ գործառնական հարկեր, որոնք հաշվարկվում են ելնելով Ընկերության գործունեությունից: Այս հարկերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են «Այլ ծախսեր» հոդվածում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են ՀՀ բանկերում բացված հաշիվները: Ընկերության դրամական միջոցների փաստացի ներհոսքի և կամ արտահոսքի ձևակերպումը կատարվում է արժույթների անվանական արժեքով պատշաճորեն ձևակերպված փաստաթղթերի հիման վրա:
Ընկերությունը գործառնական գործունեության արդյունքում ստացած համախառն դրամական մուտքերի և վճարումների հիման վրա դրամական հոսքերի մասին հաշվետվությունը կազմելիս առաջնորդվում է ուղղակի մեթոդով:

Հաշիվներ բանկերում

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է բանկերում բացված ընթացիկ կամ տարբեր ժամկետներով ավանդային հաշիվները: Ֆիքսված ժամկետով ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

- **Դասակարգում**

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ

համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- Ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն իրագործվում է թե պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և թե ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով շահույթը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների,որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով շահույթը և վնասը

- տոկոսային եկամուտ՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- սպասվող պարտքային վնաս և հակադարձումներ և
- օգուտ և վնաս փոխարժեքային տարբերություններից:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

- **Բիզնես մոդելի գնահատում**

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Ընկերության ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ ակտիվներից հավաքագրվող պայմանագրային դրամական միջոցների հոսքերից:
- նախորդ ժամանակաշրջանների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, վաճառքների պատճառները և վաճառքների ապագա ծավալների ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների ծավալի վերաբերյալ տեղեկատվությունը առանձին չի դիտարկվում, այն դիտարկվում է իրականացնելիս մեկ ընդհանուր վերլուծություն առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Ընկերության առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական միջոցների հոսքերը:

Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական ակտիվները, որոնք կառավարվում են և որոնց արդյունավետությունը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հավաքագրելու և ոչ էլ՝ թե պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հավաքագրելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու համար:

- **Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ**

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և վարկավորման հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման հնարավորությունը,
- պայմանները, որոնք սահմանափակում են Ընկերության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ (օրինակ՝ ոչ վերադարձնելի ակտիվների հետ կապված պայմանավորվածություններ),
- առանձնահատկությունները, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքի հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

➢ **Վերադասակարգում**

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, որը հաջորդում է Ընկերությյան կողմից ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելի փոփոխությանը:

➢ **Ֆինանսական պարտավորություններ**

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

➢ **Վերադասակարգում**

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

➢ **Ճանաչում**

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները կամ վաճառքները հաշվառվում են գործարքի ամսաթվի դրությամբ:

➢ **Ամորտիզացված արժեք**

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի ցանկացած մարումներ, գումարած կամ հանած սկզբնական ճանաչված գումարի և մարման գումարի միջև ցանկացած տարբերության կուտակված ամորտիզացիան՝հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ հանած ֆինանսական ակտիվի արժեզրկման ցանկացած նվազեցում: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկվում են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

➢ **Իրական արժեքի չափման սկզբունքներ**

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ, ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական, կամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Ընկերությունը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:Ֆինանսական ակտիվների կամ փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող. Շահույթի կամ վնասի միջոցով չափվող Ֆինանսական ակտիվի տոկոսագումարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է կապիտալում՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում (ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին

կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում:

- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
- Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

➢ **Ապաճանաչում**

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները, կամ որում Ընկերությունը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Ընկերության կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Եթե գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է նույն փոխատուի՝ էականորեն տարբերվող պայմաններով տրամադրած այլ ֆինանսական պարտավորությունով կամ առկա պարտավորության պայմանները էականորեն փոփոխվում են, ապա դա դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում:

Ընկերությունը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու օգուտները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Ընկերությունը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը: Ընկերությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

➢ **Արժեզրկում**

Ընկերությունը ճանաչում է պահուստ սպասվող պարտքային վնասի գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար՝ պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Ընկերությունը չափում է վնասի գծով պահուստը ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով, բացառությամբ այն ֆինանսական գործիքների, որոնց գծով պարտքային ռիսկն էականորեն չի աճել սկզբնական ճանաչման պահից, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով: Ընկերությունը չի օգտվում ցածր ռիսկի համար նախատեսված պարզեցումից իր ֆինանսական գործիքների հետ կապված:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե պարտքային ռիսկն էականորեն աճել է սկզբնական ճանաչման պահից, սակայն ֆինանսական գործիքներն արժեզրկված չեն) և որպես 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե ֆինանսական գործիքներն արժեզրկված են):

➢ **Սպասվող պարտքային վնասի չափում**

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է ըստ պարտականությունների չկատարման հավանականության աստիճանի կշռված պարտքային վնասի գնահատականը և չափվում է հետևյալ կերպ.

- ֆինանսական ակտիվներ, որոնք արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ, որպես բոլոր պակասող դրամական

միջոցների ներկա արժեք (այսինքն՝ տարբերությունն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Ընկերությունը պետք է ստանա պայմանագրի համաձայն և որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ),

- ֆինանսական ակտիվներ, որոնք արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ, որպես համախառն հաշվեկշռային արժեքի և ապագա գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի տարբերություն,
- վարկ տրամադրելու պարտավորվածությունների չօգտագործված մաս. որպես այն տարբերության ներկա արժեք, որը գոյություն ունի պայմանագրային դրամական միջոցների հոսքերի, որոնք Ընկերությունը պետք է ստանա, եթե վարկառուն օգտվի վարկ ստանալու իր իրավունքից, և այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ: Տես՝ նաև Ծանոթագրություն 4:

➢ **Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ**

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերանայվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը),և սպասվող պարտքային վնասը չափվում է հետևյալ կերպ.

- Եթե պայմանների ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով պակասող դրամական միջոցների հաշվարկում (տես՝ Ծանոթագրություն 4):
- Եթե պայմանների ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական միջոցների հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով պակասող դրամական միջոցների հաշվարկում, որոնք գեղչվում են ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

➢ **Արժեզրկված ֆինանսական ակտիվներ**

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներն արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր,որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- Վարկառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտականությունների չկատարումը կամ վճարման ուշացումը,
- Ընկերության կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- վարկառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորում:

Վարկը, որի պայմանները վերանայվել են վարկառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է արժեզրկված, եթե գոյություն չունի վկայություն, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը չստանալու ռիսկն էականորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, արժեզրկված է համարվում 90 կամ ավել օր ժամկետանց վարկը:

➢ **Սպասվող պարտքային վնասի գծով պահուստի ներկայացում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում**

Սպասվող պարտքային վնասի գծով պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- երբ գործիքը ներառում է ֆինանսական թե օգտագործված և թե չօգտագործված բաղադրիչ, և Ընկերությունը չի կարող տարանջատել վարկ տրամադրելիս պարտավորվածության բաղադրիչի գծով սպասվող պարտքային վնասն արդեն օգտագործված բաղադրիչի գծով սպասվող պարտքային վնասից: Ընկերությունը ներկայացնում է վնասի գծով ընդհանուր պահուստ երկու բաղադրիչների համար Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Այն գումարը, որով վնասի գծով պահուստը գերազանցում է օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքը,ներկայացվում է որպես պահուստ:

➢ **Դուրս գրումներ**

Վարկերը դուրս են գրվում, երբ գոյություն չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխհատուցելու իրատեսական ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Ընկերությունը որոշում է, որ վարկառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական միջոցների հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «Ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Դուրս գրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ՝ վճարման ենթակա գումարների վերադարձման Ընկերության ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

- **Հաճախորդներին տրված վարկեր**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր» հոդվածը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

- **Վարձակալված ակտիվ**

Վարձակալության գծով պարտավորությունները չափվում են վարձակալության ժամկետի դիմաց վարձատուին վճարվելիք պայմանագրային վճարների ներկայիս արժեքով, որպես զեղչային դրույքաչափ կիրառելով վարձակալության ներհատուկ դրույքաչափը, բացառությամբ այն դեպքերի, երբ (ինչպես սովորաբար լինում է), երբ դրույքաչափը հեշտ որոշելի չէ: Այդ դեպքում օգտագործվում է Ընկերության կողմից վարձակալության մեկնարկի դրությամբ լրացուցիչ վարկերի ներգրավման տոկոսադրույքը:: Վարձակալության գծով փոփոխական վճարները ներառվում են վարձակալության գծով պարտավորության չափման մեջ միայն այն դեպքում, երբ նրանք կախված են ինդեքսից կամ դրույքաչափից: Նման դեպքերում վարձակալության պարտավորության սկզբնական չափումը ենթադրում է, որ փոփոխական տարրը կմնա անփոփոխ ամբողջ վարձակալության ժամկետում: Վարձակալության այլ փոփոխական վարձավճարները ծախսվում են այն ժամանակահատվածում, որին նրանք վերաբերում են:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է վարձակալության պարտավորության չափով՝ հանած ստացված զեղչով, և գումարած.

- վարձակալության մեկնարկի դրությամբ կամ դրանցի առաջ վճարված գումարները,
- սկզբնական ուղղակի ծախսումները, և
- ճանաչված վերակազնման պահուստի գումարը, եթե Ընկերությունը ունի պայմանագրային պարտավորություն վերականգնելու վարձակալված ակտիվը

Սկզբնական ճանաչումից հետո վարձակալության գծով պարտավորությունը ավելացվում է տոկոսային ծախսի գումարով և նվազեցվում կատարված վճարների գումարով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ամորտիզացվում է ուղիղ-գծային մեթոդով՝ վարձակալության մնացորդային ժամկետի և ակտիվի օգտագործման մնացորդային ժամկետի նվազագույն ժամկետում:

- **Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Եթե հիմնական միջոցի փոխհատուցվող գումարը փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ժամանակավոր չհամարվող պայմանների արդյունքում, համապատասխան ակտիվը նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող արժեքը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով, որի հիմքում ընկած է ակտիվի օգտակար ծառայության ժամկետը: Կիրառվել են մաշվածության հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

Հիմնական միջոցներ	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Տարեկան տոկոսադրույք (%)
Համակարգչային սարքավորումներ	3	33,33
Գրասենյակային գույք	5	20
Փոխադրամիջոցներ	5	20
Վարձակալած հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսեր	20	5

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում դրանք տեղի են ունեցել: Կապիտալ բնույթի վերանորոգման ծախսերը ներառվում են ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ առաջացած ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից կհոսեն դեպի Ընկերություն: Կապիտալ վերանորոգումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում:

Հիմնական միջոցների օտարումից ծախսերը և եկամուտները որոշվում են՝ համեմատելով ակտիվի օտարումից զուտ մուտքերն ու հաշվեկշռային արժեքը և ներառվում են գործառնական եկամտի մեջ:

Վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է չբաշխված շահույթին՝ Ընկերության կողմից ակտիվների օգտագործմանը զուգընթաց: Վերագրվող գումարի մեծությունը հավասար է ակտիվների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվների սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության միջև եղած տարբերությանը:

Երբ վերագնահատված ակտիվները դուրս են գրվում կամ օտարվում են, օտարված ակտիվին վերագրելի և վերագնահատման պահուստում ներառված գումարները վերագրվում են չբաշխված շահույթին:

- **Ոչ նյութական ակտիվներ**

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտվիները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով(ինքնարժեքով): Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտվիները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանկացած կուտակված արժեզրկման ծախս: Արտարժույթով ձեռք բերված ոչ նյութական ակտիվները գրանցվում են ձեռք բերման օրվա դրությամբ ՀՀ ֆինանսական շուկայում ձևավորված և ՀՀ ԿԲ-ի կողմից հայտարարված հաշվարկային փոխարժեքով և հետագայում՝ փոխարժեքի փոփոխման դեպքում չեն վերագնահատվում: Ոչ նյութական ակտիվի միավորի վերագրումը ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանով և հաշվային պլանի կիրառման հրահանգով սահմանված այս կամ այն դասին (օրինակ՝համակարգչային ծրագրեր, լիցենզիաներ և վստահագրեր, հեղինակային իրավունքներ և այլն) իրականացվում է՝ ելնելով տվյալ միավորի օգտագործման նշանակությունից և նպատակից: Համակարգչային ծրագրերի օգտակար ծառայության ժամկետը գնահատվում է 1-10 տարի:

Ոչ նյութական ակտիվի վրա կատարված հետագա ծախսումները հաշվառվում են որպես կապիտալ ներդրումներ և ավելացվում են տվյալ ակտիվի արժեքին: Ոչ նյութական ակտիվների յուրաքանչյուր միավորի մաշվածության ժամկետը որոշվում է՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջիններիս որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվները համարվում են անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվներ, և այդ ակտիվի համար ամորտիզացիա չի հաշվարկվում, սակայն կատարվում է այդ ակտիվի վերագնահատում արժեզրկման առումով:

Ոչ նյութական ակտիվների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Ընկերությունը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

- **Փոխառություններ**

Փոխառությունները, որոնք ներառում են այլ ֆինանսական կազմակերպությունների, փոխատուների և հիմնադիր կողմի նկատմամբ պարտավորությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված զուտ մուտքերի իրական արժեքով՝ հանած անմիջապես վերագրելի գործառնական ծախսերը: Սկզբնական գնահատումից հետո փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ ապաճանաչվում են պարտավորությունները, ինչպես նաև ամորտիզացիոն ընթացակարգի միջոցով:

- **Պահուստներ,պայմանական ակտիվներ և պարտավորություններ**

Պահուստը դա անորոշ ժամկետով պարտավորություն է: Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Ընկերությունն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:Եթե նշված պայմանները չեն բավարարվում, ապա Ընկերությունը պահուստ չի ձևավորում: Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Պահուստին վերաբերվող ծախսը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կարող է ներկայացվել զուտ հիմունքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ արտացոլելու համար ընթացիկ լավագույն գնահատականը: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք,ապա պահուստը պետք է հակադարձվի: Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական պարտավորությունը դա հնարավոր պարտականություն է որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Ընկերության կողմից, կամ ներկա պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որը սակայն չի ճանաչվում հետևյալ պատճառներով.

- հավանական չէ, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, կամ
- պարտականության գումարը չի կարող չափվել բավարար արժանահավատությամբ:

Պայմանական ակտիվը դա հնարավոր ակտիվ է որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Ընկերության կողմից:

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են ծանոթագրություններում: Սակայն եթե դրանց մարման նպատակով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հնարավորությունը շատ փոքր է, ապա պայմանական պարտավորությունները չեն բացահայտվում:

- **Շահաբաժիններ**

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն և հաշվեկշռային ամսաթվի դրությամբ նվազեցվում են կապիտալից միայն այն դեպքում, եթե դրանք հայտարարվել են մինչև հաշվեկշռային ամսաթիվը կամ այդ ամսաթվին: Շահաբաժինները բացահայտվում են, երբ դրանք առաջարկվում են մինչև հաշվեկշռային ամսաթիվը, կամ առաջարկվում կամ հայտարարվում են հաշվեկշռային ամսաթվից

հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հաստատումը հրապարակման համար:

- **Հետաձգված հարկեր**

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ, բացառությամբ, եթե դրանք առաջանում են.

- գուդվիլի սկզբնական ճանաչումից,
- ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից և գործարքի ամսաթվի դրությամբ չեն ազդում ոչ հարկվող շահույթի, և ո՛չ էլ հաշվապահական շահույթի վրա,
- դուստր կազմակերպություններում և համատեղ վերահսկվող կազմակերպություններում ներդրումներից, որի դեպքում Ընկերությունն ի վիճակի է վերահսկել տարբերությունների հակադարձումը, և հավանական է, որ տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական չէ, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:
Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/(ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

- **Հաշվանցում**

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Ընկերությունն ունի հաշվանցում կատարելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, եթե այդ իրավունքը կախված չէ ապագա դեպքերից և իրագործելի է թե բնականոն գործունեության և թե Ընկերության և բոլոր պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, վերջիններիս լուծարման կամ սնանկացման դեպքում:

- **Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ**

ՖՀՆՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ծախսերի և եկամուտների վրա: Պատմական փորձի և տվյալ պայմաններում հիմնավորված այլ գործոնների վրա հիմնված գնահատումներն ու դրանց հետ կապված ենթադրությունները հնարավորություն են տալիս դատողություններ անել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք հնարավոր չէ որոշել այլ աղբյուրներից: Բոլոր դեպքերում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

- **Կապակցված կողմեր**

Կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս:

Ընկերության համար կապակցված կողմեր են՝

1. կազմակերպությունները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են Ընկերությանը կամ վերահսկվում նրա կողմից, կամ Ընկերության հետ ընդհանուր վերահսկողության տակ են գտնվում,
2. ասոցիացված կազմակերպությունները
3. համատեղ վերահսկվող միավորները
4. քաղաքացիները(ներառյալ՝դրանց ընտանիքի մտերիմ անդամները), որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն Ընկերությունում ունեն այնքան ձայնի իրավունք, որը նրանց կազմակերպության վրա նշանակալի ազդեցության հնարավորություն է տալիս,
5. հանգուցային կառավարչական անձնակազմը, այսինքն այն անձինք, որոնք իրավասու են և պատասխանատվություն են կրում հաշվետու կազմակերպության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար, ներառյալ կազմակերպությունների տնօրենները, պաշտոնատար անձինք և նրանց ընտանիքի մտերիմ անդամները,
6. կազմակերպությունները, որոնցում զգալի քանակությամբ ձայների իրավունքն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է «4» և «5» կետերում նկարագրված ցանկացած անձի, կամ որոնց վրա այդպիսի անձինք ունեն նշանակալի ազդեցություն: Դրանցից են այն կազմակերպությունները, որոնք պատկանում են հաշվետու կազմակերպության տնօրեններին

կամ խոշոր բաժնետերերին, և այն կազմակերպությունները, որոնք հաշվետու կազմակերպության հետ ունեն հանգուցային կառավարչական անձնակազմի ընդհանուր անդամ:

Ընկերությունը իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական գներով: Գործող շուկայի բացակայության դեպքում շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքների կիրառումը որոշվում է դատողությունների հիման վրա: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

- **Էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականություն մեջ**

Մեկ կամ ավելի նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ թույլ տված և հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված սխալները, որոնք հետևանք են թվաբանական անճշտությունների, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում թույլ տված սխալների, փաստերի ոչ ճիշտ մեկնաբանման, խաբեության կամ անփութության, ենթակա են ուղղման, որպես կանոն, հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշետվություններում: Թույլ տված այն սխալները, որոնք ունեն այնպիսի նշանակալի հետևանքներ նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա, որ դրանք չեն կարող այլևս արժանահավատ համարվել, համարվում են էական սխալներ:

Ընկերությունն ուղղում է նախորդ ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության դեպքում

- Ընկերությունը հաշվառում է ՖՀՄՍ-ի առաջին կիրառման արդյունքում առաջացող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը տվյալ ՖՀՄՍ-ի կոնկրետ անցումային դրույթների համաձայն (եթե այդպիսիք կան)
- Երբ Ընկերությունը փոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ կապված որևէ ՖՀՄՍ-ի առաջին անգամ կիրառման հետ, որը չի ներառում այդ փոփոխությանը վերաբերող կոնկրետ անցումային դրույթներ, ապա Ընկերությունը այդ փոփոխությունը կիրառում է հետընթաց:

- **Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր**

Հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող դեպքերն այն բարենպաստ և ոչ բարենպաստ դեպքերն են, որոնք տեղի են ունենում հաշվապահական հաշվետու ժամանակաշրջանի վերջի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները վավերացվում (ստորագրվում) են ներկայացնելու (օրենսդրությամբ սահմանված հասցեներով) համար:

Ընկերությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով /դեպքեր, որոնք հաստատում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գոյություն ունեցող պայմանները կամ իրավիճակը/:

Եթե էական սխալի գումարը, կախված տվյալ գործարքի կամ հոդվածի չափից և բնույթից, չի գերազանցում Ընկերության հաշվեկշռային ակտիվների հանրագումարի մեկ տոկոսը, և եթե այդ տեղեկատվության բացահայտելը չի ազդելու օգտագործողների կողմից ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա, ապա նախորդ տարվա վերջին օրվա ամսաթվով կազմված ֆինանսական դրության մասին հաշվետվության մեջ փոփոխություններ չեն կատարվում:

Ընկերությունը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով/դեպքեր, որոնք ցույց են տալիս հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո առաջացած պայմանները կամ իրավիճակը/:

Եթե սեփական կապիտալի գործիքներ տիրապետողների շահաբաժինները առաջադրված կամ հայտարարված են հաշվետու ժամանականշրջանի վերջից հետո, Ընկերությունը չի ճանաչում այդ շահաբաժինները որպես պարտավորություն՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Ընկերությունն այս պահին գնահատում է, որ հաշվետու ժամանակաշրջանից հետո COVID-19-ի բռնկման ազդեցությունը և ծանրությունը թուլացել է , հետևաբար դա չի կարող էական ազդեցություն թողնել Ընկերության 2022 ֆինանսական տարվա հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

- **Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման պահուստներ՝**

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Ընկերությունը վերանայում է իր խնդրահարույց վարկերն ու փոխատվությունները՝ որոշելու համար, թե արդյոք արժեզրկման պահուստ պետք է նախատեսվի ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է որոշել պահանջվող պահուստի չափը: Նման գնահատումները հիմնված են մի շարք գործոնների վերաբերյալ ենթադրությունների վրա, և իրական արժեքները կարող են տարբերվել, որը կհանգեցնի պահուստի գումարի հետագա փոփոխությունների:

Առանձնաբար նշանակալի վարկերի և փոխատվությունների համար ստեղծված հատուկ պահուստից բացի, Ընկերությունը ստեղծում է նաև արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ցուցանիշների վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ, տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումը:

4 Զուտ տոկոսային եկամուտ

ա) Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Տոկոսային եկամուտներ վարկերից և այլ փոխառություններից	325,421	311,983
Տոկոսային եկամուտներ ներդրումներից	12,430	16,263
Այլ	471	528
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	**338,322**	**328,774**

բ) Տոկոսային և նմանատիպ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Տոկոսային ծախսեր ներգրավված վարկերից և փոխառություններից	(55,863)	(63,311)
Տոկոսային ծախսեր բանկերից ներգրավված վարկերի գծով	(331)	(2,520)
Տոկոսային ծախսեր գործառնական վարձակալության գծով	(2,257)	(1,577)
Այլ	(51)	(82)
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	**(58,502)**	**(67,490)**
Զուտ տոկոսային եկամուտ	**279,820**	**261,284**

5 Ստացված զուտ կոմիսիոն վճարներ

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Հաճախորդներին տրված վարկերից	77,084	53,941
Ընդամենը	**77,084**	**53,941**

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Միջնորդավճարների գծով ծախսեր	(290)	(581)
Ընդամենը	**(290)**	**(581)**
Ստացված զուտ կոմիսիոն վճարներ	**76,794**	**53,360**

6 Այլ գործառնական եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	45,626	40,054
Եկամուտներ ստացված շնորհներից	-	528
Ընդամենը	**45,626**	**40,582**

7 Արժեզրկման գծով (ծախս)/հակադարձում

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Վարկերի, դերբ. պարտքերի կորուստների վերականգնումից եկամուտ	106,608	391,911
Վարկերի, դերբ. պարտքերի կորուստներին հատկացում	(63,474)	(295,737)
	43,134	**96,174**

8 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	(113,546)	(115,978)
Անձնակազմի ուսուցման ծախսեր	(302)	(244)
Հատկացումներ արձակուրդային պահուստին և ոչ աշխատանքային օրերի համար վճարումներ	(7,322)	(5,213)
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**(121,170)**	**(121,435)**

9 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Հեռահաղորդակցություն	(10,858)	(10,346)
Փոխադրամիջոցների սպասարկում	(4,366)	(6,780)
Աուդիտ, խորհրդատվություն	(2,640)	(2,880)
Սարքավորումների սպասարկում	(1,207)	(1,198)
Գրասենյակային ծախսեր	(5,717)	(4,368)
Ապահովագրություն	(4,182)	(4,702)
Շենքի սպասարկում	(3,114)	(2,685)
Գործուղում	(1,447)	(675)
Չփոխհատուցվող հարկեր	(6,912)	(6,744)
Այլ	(30,078)	(31,900)
Ընդամենը	**(70,521)**	**(72,278)**

10 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Մաշվածության գծով ծախս	(13,313)	(11,776)
Գովազդի ծախսեր	(238)	(260)
Անդամավճարներ	(1,822)	(1,827)
Ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով ծախսեր	(1,012)	(1,182)
Օտարած հիմնական միջոցների ինքնարժեք	-	-
Այլ	-	-
Ընդամենը	**(16,385)**	**(15,045)**

11 Շահութահարկի գծով ծախս

Շահութահարկի դրույքաչափը գործող օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետությունում 2022թ -ին կազմում է 18% (2021թ -ին նույնպես 18%): Հետաձգված շահութահարկի գումարը ևս հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով: Ընկերությունը ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով եկամուտների և ծախսերը հարկային առումով հաշվարկելիս առաջնորդվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ վարկային կազմակերպությունների միությանն ուղղված պարզաբանումով, համաձայն որի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով եկամուտների և ծախսերի ճանաչման համար պետք է հիմք ընդունել վարկերի և փոխառությունների պայմանագրերում ամրագրված անվանական տոկոսադրույքները:

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(11,450)	26,786
Հետաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում)	16,974	(91,449)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**5,524**	**(64,663)**

Հետաձգված հարկային ակտիվների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների և ՖՀՄՍ 9-ի ճշգրտման ազդեցության մանրամասները ներկայացված են ստորև.

2022թ. (հազար դրամ)	Մնացորդն առ 1 հունվարի 2022	Ճանաչվել է շահույթում կամ վնասում	Մնացորդն առ 3 1 դեկտեմբերի 2022
Հաճախորդներին տրված վարկեր	(91,544)	16,951	(74,593)
Հիմնական միջոցներ	-	(5,093)	(5,093)
Այլ պարտավորություն	95	5,116	5,211
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(91,449)	16,974	(74,475)

2021թ. (հազար դրամ	Մնացորդն առ 1 հունվարի 2021	Ճանաչվել է շահույթում կամ վնասում	Մնացորդն առ 3 1 դեկտեմբերի 2021
Հաճախորդներին տրված վարկեր	(27,209)	(64,335)	(91,544)
Հիմնական միջոցներ	-	-	-
Այլ պարտավորություն	420	(325)	95
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(26,789)	(64,660)	(91,449)

12.Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ընթացիկ հաշիվներ բանկերում	3,533	3,153
Պահուստներ	(35)	(31)
Ընդամենը	**3,498**	**3,122**

13. Բանկերում տեղաբաշխված միջոցներ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Բանկերում ներդրված ժամկետային ավանդներ	186,074	184,730
Բանկերում ներդրված ժամկետային ավանդների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ	25,442	17,818
Պահուստներ	(2,115)	(2,026)
Ընդամենը	**209,401**	**200,522**

14. Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և այլ փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Տրամադրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և այլ փոխատվություններ	2,448,538	2,374,955
Տեղաբաշխված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի գծով պահուստ	(673,490)	(707,543)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	**1,775,048**	**1,667,412**

15. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Շահագործման մեջ գտնվող ակտիվներ	Շենքեր, շինություններ	Գրասենյակային գույք	Համակարգչային տեխնիկա	Փոխադրամիջոցներ	Վարձ. Գույքի վրա կապիտալ ներդրումներ	Ոչ նյութական ակտիվներ և այլ ՀՄ	Օգտագործման իրավունքով ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
Առ 01.01.2021թ.		7,797	18,536	22,877	9,937	11,813	26,269	97,229
Ավելացում		1,098	2,821	-	-	977	5,316	10,212
Օտարում/դուրսգրում		-	-				(10,013)	(10,013)
Վերանորոգումից արժեքի աճ								
Առ 31.12.2021թ.		8,895	21,357	22,877	9,937	12,790	21,572	97,428
Ավելացում	60,000	382	2,314	-	-	1,346	20,222	84,264
Օտարում/դուրսգրում		-	-				(3,933)	(3,933)
Առ 31.12.2022թ.	60,000	9,277	23,671	22,877	9,937	14,136	37,861	177,759
Մաշվածություն								
առ 01.01.2021թ.		7,087	15,958	22,877	7,402	9,011	7,671	70,006
Մաշվածության ծախս		421	2,211	-	382	770	7,992	11,776
Օտարում/ դուրս գրում					(2)		(10,013)	(10,015)
առ 31.12.2021թ.		7,508	18,169	22,877	7,782	9,781	5,650	71,767
Մաշվածության ծախս		505	2,136	-	378	822	9,472	13,313
Օտարում/դուրս գրում							(3,933)	(3,933)
առ 31.12.2022թ.		8,013	20,305	22,877	8,160	10,603	11,189	81,147
Հաշվեկշռային արժեքն առ 31.12.2021		1,387	3,188	-	2,155	3,009	15,922	25,661
Հաշվեկշռային արժեքն առ 31.12.2022	60,000	1,264	3,366	0	1,777	3,533	26,672	96,612

16. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

Հազար ՀՀ դրամ

	2022թ.	2021թ.
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	13,597	25,667
Դեբիտորական պարտքերի պահուստ	(261)	(123)
Ընդամենը	**13,336**	**25,544**

17. Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Բռնագանձված գրավ - անշարժ գույք	6,255	4,385
Այլ ակտիվներ		
Արագամաշ առարկաներ	311	405
Ընդամենը	**6,566**	**4,790**

18. Պարտավորություններ բանկերի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Բանկերից ստացված վարկեր	-	10,942
Հաշվեգրված տոկոսներ	-	80
Ընդամենը	**-**	**11,022**

19. Ներգրավված վարկեր և փոխառություններ

Հազար ՀՀ դրամ

	Արժույթ	Մարման ժամկետ	Դրույք (%)	Արդյունավետ դրույք(%)	31.12.22թ.	31.12.21թ
Չապահովված փոխառություն ԷԿԼՕՖ Միջազգային Հիմնադրամ	ՀՀ դրամ	2022թ.	9%	12,43%	-	25,749
Չապահովված փոխառություն ԷԿԼՕՖ Միջազգային Հիմնադրամ	ՀՀ դրամ	2021թ.	9%	11,57%	52,180	104,363
Ապահովված փոխառություն ՀՀ «ԳՏՏԶ ԾԻԳ» ՊՁ-ից	ՀՀ դրամ	Անորոշ	7%	7,23%	77,788	62,235
Ապահովված փոխառություն ՀՀ «ԳՏՏԶ ԾԻԳ» ՊՁ-ից	ՀՀ դրամ	Անորոշ	2%	2,02%	4,304	0
Չապահովված փոխառություն ԷԿԼՕՖ Միջազգային Հիմնադրամ	ՀՀ դրամ	2032թ.	7%	7,12%	389,069	389,088
Չապահովված փոխառություն ԷԿԼՕՖ Հիմնադրամ	ՀՀ դրամ	2026թ.	10%	10,47%	181,544	181,550
Ընդամենը					704,885	762,985

20 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Այլ անձանց ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ	28,020	16,394
Կրեդիտորական պարտքեր բյուջեի նկատմամբ	5,673	1,472
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	930	3,155
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,721	1,309
Շնորհներ	-	-
Այլ	24,148	16,155
Ընդամենը	**60,492**	**38,485**

21 Կապիտալ և պահուստներ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 701,220,801(յոթ հարյուր մեկ միլիոն երկու հարյուր քսան հազար ութ հարյուր մեկ) ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է հետևյալ համամասնությամբ՝ ԷԿԼՕՖ Հիմնադրամ 73,12%, ԷԿԷՕՖ Միջազգային Հիմնադրամ՝ 26.88%:

22 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է վարկային կազմակերպությունների համար և Ընկերության գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկն այն հիմնական (էական) ռիսկերն են, որոնց ենթարկվում է Ընկերությունը:

ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների,առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար,ինչպես նաև պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Ընկերության գործունեությունն ապահովելու համար:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե պորտֆելի և թե առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Ղեկավարության կողմից:

Ընկերության ներքին փաստաթղթերի համաձայն՝ ներքին աուդիտի բաժինը հաճախակի պատրաստում է հաշվետվություններ,որոնք անդրադառնում են Ընկերության նշանակալից ռիսկերի կառավարման հարցերին: Հաշվետվություններում ներառում են Ընկերության ընթացակարգերի և մեթոդների արդյունավետության գնահատումը և բարելավումներին ուղղված առաջարկությունները:

Ռիսկի թե արտաքին, թե ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Ընկերության կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Հատուկ ուշադրություն է դարձվում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության որոշմանը:

բ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերության հիմնական գործունեությունը միկրովարկերի տրամադրումն է: Համապատասխանաբար, վարկային ռիսկը մեծագույն կարևորություն ունի միկրոֆինանսական կազմակերպությունների (ՄՖԿ) ռիսկերի կառավարման մեջ: Զգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Ընկերությունը կիրառում է տարբեր մեթոդներ վարկային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով:Միկրոֆինանսակավորման ոլորտը ընդհանուր առմամբ հակված է վարկային ռիսկի՝ հաճախորդներին տրամադրվող վարկերի և բանկային ավանդների միջոցով: Ինչ վերաբերում է հաճախորդներին տրված վարկերին, այս ռիսկը կենտրոնացած է Հայաստանի Հանրապետությունում: Ռիսկերի կառավարումը և մոնիտորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Վարկային կոմիտեների և վարկային կազմակերպության խորհրդի կողմից: Վարկային կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը վարկային մասնագետի կողմից հաճախորդի նախնական հայտի, նրա բիզնեսի և վարկային ռիսկերի պատշաճ ուսումնասիրության հիման վրա կատարված նախնական վերլուծական տեղեկություններ են, որոնց ճշգրտությունը համեմատական եղանակով ստուգում է նաև վարկային կառավարիչը, վարկային մասնագետի և վարկային կառավարիչի պատասխանատվությամբ: Ի վերջո Վարկային կոմիտեի անդամները գնահատում են հայտի համապատասխանությունը սահմանված չափանիշներին (դիմողի վարկային պատմությունը, ֆինանսական վիճակը, մրցակցային ունակությունը և այլն):Տնօրենը կոչված է բացահայտելու գործառնական, վարկային, պրոդուկտային ռիսկերի բացահայտման համար: Ներքին աուդիտը իրականացնում է ներկայացուցչությունների և Ընկերության վարկային գործընթացների կանոնավոր աուդիտներ: Ընկերության վարկերի տրամադրման և սպասարկման ընթացակարգի համաձայն վարկային մասնագետները, գործառնական բաժինը, անվտանգությունը համապատասխանաբար ուսումնասիրում է ժամկետանց վարկերի վերլուծությունը և հետամուտ է լինում ուշացված մնացորդներին: Տնօրենի վերահսկողությամբ իրականացվում է ժամկետանց վարկերի հետ աշխատանքների կազմակերպումը: Ընկերության բոլոր վարկերը ապահովված են վարկառուների և/կամ այլ անձանց անձնական երաշխավորություններով: Բացի այդ ըստ նպատակահարմարության, և վարկերի չափերից ելնելով, որպես դրանց ապահովման միջոց Ընկերությունն ընդունում է գրավ: Այնուամենայնիվ, վարկերի զգալի մասն անհատներին տրված փոքր գումարներով վարկեր են, որտեղ այսպիսի ապահովության միջոցներ չեն կարող ձեռք բերվել: Այսպիսի ռիսկերը մոնիտորինգի են ենթարկվում շարունակական հիմունքով և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայումների:

գ) Պարտքային ռիսկի առավելագույն չափը

Ընկերության պարտքային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է անհատական ռիսկերից, և ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների

հաշվեկշռային արժեքին նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

Ստորև ներկայացված է պարտքային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ	Ծան.	Համախառն առավելագույն ռիսկի չափն առ 31.12. 2022թ.	Համախառն առավելագույն ռիսկի չափն առ 31.12. 2021թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	3,498	3,122
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	13	209,401	200,522
Հաճախորդներին տրված վարկեր	14	1,775,048	1,667,412
		1,987,947	**1,871,056**

Հաշվեկշռային արժեքը լավագույն ձևով ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը, հաշվի առնելով նաև ձեռք բերված ցանկացած գրավ կամ անձնական երաշխիքներ: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր զուտ ազդեցությունը վարկային ազդեցության նվազեցման վրա էական չէ: 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտքային ռիսկերը ամբողջությամբ կենտրոնացված են ՀՀ-ում:

դ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների և արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների ազդեցությանը:

ե) Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Հազար ՀՀ դրամ

					2022թ.
Ակտիվներ	**Մինչև մեկ ամիս**	**1-ից 3 ամիս**	**3-ից 12 ամիս**	**1-ից 5 տարի**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,498				3,498
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	30,000	65,000	114,401		209,401
Հաճախորդներին տրված վարկեր	273,428	21,567	175,029	1,305,024	1,775,048
Ընդամենը ակտիվներ	**306,926**	**86,567**	**289,430**	**1,305,024**	**1,987,947**
Պարտավորություններ					
Ներգրավված վարկեր և փոխառություններ	29,167	8,896	122,305	544,517	704,885
Վարձակալության գծով պարտավորություն	990	2,970	8,910	15,150	28,020
Շահութահարկի գծով պարտավորություն			2,658		2,658
Այլ պարտավորություններ	26,637				26,637
Ընդամենը պարտավորություններ	**56,794**	**11,866**	**133,873**	**559,667**	**762,200**
Զուտ դիրքը	**250,132**	**74,701**	**155,557**	**745,357**	**1,225,747**

Հազար ՀՀ դրամ

					2021թ.
Ակտիվներ	**Մինչև մեկ ամիս**	**1-ից 3 ամիս**	**3-ից 12 ամիս**	**1-ից 5 տարի**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,122				3,122
Բանկերում տեղաբաշխված միջոցներ				200,522	200,522
Հաճախորդներին տրված վարկեր	241,125	26,632	289,175	1,110,480	1,667,412
Ընդամենը ակտիվներ	**244,247**	**26,632**	**289,175**	**1,311,002**	**1,871,056**
Պարտավորություններ					
Ներգրավված վարկեր և փոխառություններ	26,776	26,776	412,591	291,788	757,931
Վարձակալության գծով պարտավորություն					
Շահութահարկի գծով պարտավորություն					
Այլ պարտավորություններ	20,616			16,394	37,010
Ընդամենը պարտավորություններ	**47,392**	**26,776**	**412,591**	**308,182**	**794,941**
Զուտ դիրքը	**196,855**	**(144)**	**(123,416)**	**1,002,820**	**1,076,115**

զ) Արտարժութային զամբյուղ

Արտարժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվալ դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Ընկերության արտարժութային ռիսկը հիմնականում առաջանում է ԱՄՆ դոլարով ստացված վարկերի հետ կապված փոխարժեքային փոփոխություններից, ինչի արդյունքում Ընկերությունը կարող է կրել նշանակալի վնասներ: Այս ռիսկն, ըստ էության, Ընկերության կողմից չի կառավարվում՝ հաշվի առնելով դրա կառավարման հետ կապված ծախսերը և նման ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ գործիքակազմի բացակայությունը:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության զուտ ենթարկվածությունը արտարժութային ռիսկին ներկայացված է ստորև՝

2022թ.

Հազար ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	3,493	5	3,498
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	209,401	-	209,401
Հաճախորդներին տրված վարկեր	1,775,048	-	1,775,048
Ընդամենը ակտիվներ	**1,987,942**	**5**	**1,987,947**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	-	-
Ներգրավված փոխառություններ, վարկեր	704,885	-	704,885
Այլ պարտավորություններ	54,818	-	54,818
Ընդամենը պարտավորություններ	**759,703**		**759,703**
Զուտ դիրքն առ 31.12.2022թ.	**1,228,239**	**5**	**1,228,244**

2021թ.

Հազար ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	3,120	2	3,122
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	200,522	-	200,522
Հաճախորդներին տրված վարկեր	1,667,412	-	1,667,412
Ընդամենը ակտիվներ	**1,871,054**	**2**	**1,871,056**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	11,022	-	11,022
Ներգրավված փոխառություններ, վարկեր	762,985	-	762,985
Այլ պարտավորություններ	37,013	-	37,013
Ընդամենը պարտավորություններ	**811,020**		**811,020**
Զուտ դիրքն առ 31.12.2021թ.	**1,060,034**	**2**	**1,060,036**

է) **Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրուքների փոփոխության արդյունքում: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

ը) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող սեփական միջոցների կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը չի կարողանա մարել իր վճարման պարտավորությունները սթրեսային և նորմալ իրավիճակներում: Այս ռիկսի սահմանափակման համար Ղեկավարությունը կառավարում է ակտիվները՝ հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերության իրացվելիության վերահսկողությունը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ինչպես նաև ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել իրացվելիության հաշվեկշռային գործակիցները:

Ստորև ներկայացված աղյուսակը ամփոփում է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ըստ մարման ժամկետների 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հիմնվելով չզեղչված վճարումների պայմանագրային պարտավորությունների վրա: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ դրանք կպահանջվեն անմիջապես:

Առ 31 դեկտեմբեր 2022թ.

Հազար ՀՀ դրամ	Ցպահանջ, մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-3 տարի	3 տարուց ավել	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	29,167	8,896	122,305	124,297	420,220	704,885
Ներգրաված փոխառություններ						
Այլ պարտավորություններ	26,637					26,637
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**55,804**	**8,896**	**122,305**	**124,297**	**420,220**	**731,522**

Առ 31 դեկտեմբեր 2021թ.

Հազար ՀՀ դրամ	Ցպահանջ, մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-3 տարի	3 տարուց ավել	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	1,776	3,615	5,551			10,942
Ներգրաված փոխառություններ	25,000	25,000	405,220	191,788	100,000	747,008
Այլ պարտավորություններ	20,616				16,394	37,010
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**47,392**	**28,615**	**410,771**	**191,788**	**116,394**	**794,960**

թ) Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Ընկերության գործունեության անընդհատության սկզբունքը միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրաված և սեփական միջոցների մնացորդների օպտիմալացման ճանապարհով: ՀՀ կենտրոնական բանկը Ընկերության համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների, վարկային կազմակերպությունները 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովեն 150,000 հազար ՀՀ դրամ նվազագույն ընդհանուր կապիտալ (2021թ. դեկտեմբերի 31-ին՝ 150,000 հազար ՀՀ դրամ): Հետևյալ աղյուսակը վերլուծում է Ընկերության կապիտալ ռեսուրսները կապիտալի համարժեքության նպատակներով:

Հազար ՀՀ դրամ	2022	2021
Ներգրավված վարկեր և փոխառություններ	704,885	774,007
Այլ պարտավորություններ	60,491	38,485
Հանած դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(212,899)	(203,644)
Զուտ պարտք	**552,477**	608,848
Սեփական կապիտալ	**1,259,114**	1,023,110
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն (%)	**43,9**	59,5

23 Պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ

Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

ՀՀ հարկային համակարգը բնորոշվում է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ հստակ չէ և տարընթերցումների տեղիք է տալիս: Հարկային հաշվառումը ենթակա է ստուգման և ուսումնասիրման իրավասու մարմինների կողմից, որոնց իրավունք է վերապահված կիրառել տույժեր և տուգանքներ:

Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները, հիմք ընդունելով օրենքների պաշտոնական մեկնաբանումները և պարզաբանումները: Այնուամենայնիվ, իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և Ընկերության համար հետևանքները կարող են լինել էական, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

24 Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Հազար ՀՀ դրամ	2022թ.		2021թ.	
	Վարկեր	Տես. կշիռ	Վարկեր	Տես. կշիռ
Գյուղատնտեսություն	929,742	52.37 %	888,240	53,27 %
Առևտուր	192,422	10.84 %	193,852	11.63 %
Սպառողական վարկեր	425,729	23.98 %	328,835	19.72 %
Արդյունաբերություն	109,065	6.17 %	150,148	9,00 %
Սպասարկում	68,757	3.87 %	34,144	2.05 %
Շինարարություն և վերանորոգում	8,439	0.47 %	11,065	0,66 %
Տնտեսության այլ ճյուղեր	40,894	2.30%	61,128	3.67%
Ընդամենը	**1,775,048**	**100.00 %**	**1,667,412**	**100.00 %**

Հազար ՀՀ դրամ	2022թ		2021թ.	
	Վարկ	Տես. կշիռ	Վարկ	Տես. կշ
Երևան	4,873	0.27 %	5,880	0,35
Արմավիր	645,611	36.38 %	642,545	38,54
Արարատ	226,196	12.75 %	143,410	8,60
Արագածոտն	32,601	1.83 %	45,645	2,74
Կոտայք	7,776	0.44 %	6,923	0,42
Վայոց Ձոր	154,673	8.71 %	164,824	9,88
Գեղարքունիք	300,731	16,94 %	269,239	16,15
Սյունիք	295	0.02%	216	0,01
Լոռի	402,292	22.66%	388,730	23,31
Ընդամենը	**1,775,048**	**100.0 %**	**1,667,412**	**100.0**

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է տրամադրված վարկերի վերլուծությունն ըստ Ընկերության կողմից ձեռքբերված գրավի տեսակների 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	2022թ. Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժե ք	2021թ. Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք
Անշարժ գույք	167,220	173,258
Երաշխավորություն	1,596,960	1,481,671
Փոխադրամիջոցներ	675	759
Այլ հիմնական միջոցներ	260	790
Չապահովված վարկեր	9,933	10,934
Ընդամենը	**1,775,048**	**1,667,412**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համաձայն ՖՀՄՍ 9-ի:

	2022թ			2021թ		
Վարկեր ամորտիզացված արժեքով	Համախառն	Պահուստ	Զուտ	Համախառն	Պահուստ	Զուտ
Ժամկետային վարկեր	**758,475**	**28,698**	**729,777**	**1,340,666**	**104,587**	**1,236,079**
Ժամկետանց և արժեզրկված վարկեր	**1,690,063**	**644,793**	**1,045,271**	**1,034,289**	**602,956**	**431,333**
1-ից 30 օր ժամկետանց	569,667	44,742	524,925	20,117	7,427	12,690
31-ից 60օր ժամկետանց	49,453	10,267	39,187	10,454	4,395	6,059
60-ից 90 օր ժամկետանց	34,554	10,185	24,369	12,301	5,347	6,954
91 և ավել ժամկետանց	1,036,389	579,599	456,790	991,416	585,786	405,630
Ընդամենը	**2,448,538**	**673,491**	**1,775,048**	**2,374,955**	**707,543**	**1,667,412**

25 Կապակցված կողմեր

Կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա հիմնադիրները, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված և նրանց կողմից վերահսկվող այլ անձիք և կազմակերպություններ:
Ընկերությունը իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Հաշվետու ժամանակաշրջանում կապակցված կողմերից ստացվել են փոխառություններ, որը ներկայացնում ենք ստորև՝

	31.12.2021թ.	Ավելացում	Նվազում	31.12.2022թ.
Ներգրավված փոխառություն ԷԿԼՕՖ Հիմնադրամ	180,000	-	-	180,000
Ներգրավված փոխառություն ԷԿԼՕՖ Միջազգային Հիմնադրամ	505,220	-	(75,000)	430,220
Ընդամենը	685,220	-	(75,000)	610,220

26 Գործարքներ ղեկավար անձնակազմի հետ

«Անձնակազմի գծով ծախսեր» հոդվածում (ծանոթագրություն 8) ներառված է ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրությունը,որը 2022թ., դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 52,997 հազար ՀՀ դրամ (2021թ՝ 53,104 հազար ՀՀ դրամ):

27 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

Հաշվետու ամսաթվից հետո որևէ դեպք կամ գործարք տեղի չի ունեցել, որը կարող է նշանակալի լինել Ընկերության ֆինանսական վիճակի կամ ֆինանսական արդյունքի համար:

ԷԿԼՕՖ ՈՒՎԿ ՍՊԸ

Գործադիր տնօրեն՝ Ստեփան Թորոսյան

Փորձագետ հաշվապահ՝ Կարինե Պողոսյան